

Ա յս անդէն անդ ել ՚ի շրմանցն, «Ի շրմազըրը լուծ առնուք Փրկչին,  
Դուք որդեակը իմ, յօժար սրախւ զնուուոր լինիք սրբոյ Խաչին : »  
— Հայո, Փրկչին եմք ձօնք յաւիտեան,  
Օսյո մեր վերջին ընկալդու բան :

Ծնդ այս անդէն Հայրապետին բիրք աստուածեան պիշ ՚ի սուրբ Խաչ  
Նախ սրտագինս մնջեալ աղօթս, հուսկ կարկառեր զիւր օրհնեալ Աջ,  
«Ես գնեմ ձեռս ՚ի վերայ ձեր, զինուարքդ ազնիւ Փրկչին փառաց,  
Քրիստոսի էք յայսլմհետէ դուք խոչակիր զաւակք շնորհաց : »

— Անք Քրիստոսի եմք ձօնք յաւէտ,  
Հայրաստանեացյա նկ Հայրապետ :

Եսոց, օրհնեաց... Յաւիտենին ահա անդէն ՚ի բարձրութեն ՚ի իտրան  
Ել բարձրացաւ նորընծայիցն այս լուս մրմռնջ, այս ուխտի բան:  
«Ավ որդեակը իմ, ձայնէք Եսուուած, արքայութեան գուք ժառանգորդ,  
Կմմահական և փառացն իմ վստահ լերուք՝ լիջիք հաղորդ : »

— Բանզի գու սց ետուք մեզ յոյս,  
Ավ Փրկիչ մեր և Տեր Յիսուս :

ԱՅՐԱԿԱՆ  
1871 Յ-Է 18

Ս. Ապրաղեա  
Տ. Անհանդան :

ՀԱՄԱԲՈՅՈՑ  
ՊԱՏԱՍԽԱՆԵՐ

Պօկն. Առ Պ. Ա. Պ. Զեր նամա.  
կաւ կը գանդատիք ազգային ըրա-  
գրութեան ընդդիմախոս ու. հակա-  
պատկեր վիճակէն. և Զեր փառատերը  
զգալի օրինակաւ տպացուցանելու  
համար կը գրէք թէ. «Ոինչդեռ մի  
կողմէն Ան և Երեւելքան Վանուլյու-  
նական մոլեկոնութիւնը կը դատա-  
դրաբանեն և Վախս կը ձայնակցի, Անոնի  
ամբողջ յօդուածը հրատարակելով.  
միւս կողմէն Արշակունի կը դիմարանէ  
և Երեւելքան Վանը ազգասիրական ո-  
գւցն դէմ յարձակելով, թեթեւա-  
մաբար յայտարարութիւն կընէ իւր  
914 թուուլ թէ Յօյները մեր մէծ եղայր-  
ներն էն. մեռ բուլունին կը երձէնք Երեւ-  
ելքան Վանը իսուելը :

Ինչու կը ցաւիք, Անձարգոյ բա-  
րեկամ: Արշակունի որ իւր յայ-  
տարարութիւնը Օմիւոնից Հայ հա-  
ստրակութեան ձայն կը համարի, ըն-  
թերցող մի չըկայ որ սց բանին հա-  
ւատաց, ուրեմն իւր յայտարարու-  
թիւնը իւր յատուկ համուղումն և լոկ  
իւր անձնական խոստովանութիւննէ.  
ուստի ամենեւին պիխտի ըզդորմանոք  
եթէ Արշակունի կրտսեր Յօյն մի ճա-  
նաչելով զիերն՝ Յօյն մէծ եղայրներ  
ունենաց: Այս մասին երբէք վկանեա-  
լու և գանդատելու չէ. այլ մանա-  
ւանդ շնորհակալ լինելու է Արշակունին,  
որ իւր կոչումը որ մինչեւ ցայսօր ան-  
յացտ էր մեզ ինքն ամենայն ողար-  
զախօսութեամք կը յայտնէ ՚ի լուր  
ամենեցուն, որով կիմանամք թէ:  
Հայոց մէջ եղիշագոյն կարծուած | բա-  
զրապետը կրտսերագոյն Յօյն մի եղած է:  
Ուրեմն ներեցէք մեզ որ փոխանակ

ձեր ընդարձակ նամակը տպագրելու  
Այժմ մէջ , բաւական կը համարինք  
սցին երկու տող պատասխանը հրա-  
տարակել :

—Պօֆ . Առ Պ . Ա . Յ . Այս երկ-  
րորդ անգամն է , որ բարեկամութք  
կը լսատիպէք մեզ՝ Օքադիլ և Անողութիւ-  
երկարատեւ վիճաբանութեանց մա-  
սին մեր կարծիքը հրատարակել Այժմ  
միջոցաւ : Աերեցէք մեզ որ կարող չենք  
Չեր առաջարկութիւնը ընդունիլ .  
վասն զի թէ և ցաւ է մեզ տեսնել , որ  
երկու լրագիրներ երկար ժամանակէն  
՚ի վեր ըստ ամենայնի անձնական հա-  
կառակութեան , քան թէ շահաւետ  
վիճաբանութեան զոհած են իրենց  
էջերը . բայց մենք՝ փոխանակ քննա-  
դատելու , աւելի լսու կը համարիմք  
թողուլ մինչեւ որ իրենք զգան անձ-  
նական վիճաբանութեան անուեղու-  
թիւնները և փորձով համոզուելով  
ուսանին խիստապէս վիճաբանիլ . քան  
թէ նախատել այպահնել անուանար-  
կել և հայհցել :

Բերութ . Առ Ա . Պ . Կ . Շարու-  
նակ կը գրէք՝ թէ ինչո՞ւ ընհրատարա-  
կեցինք մինչեւ ցայսօր աեղդ պատու-  
հած գողութեան տեղեկագիրը և Տե-  
րութեան դատարանի մէջ կատար-  
ուած քննութեան արձանագրութեց  
պատճենները , զորս զրկած էիր մեզ :  
Բայց ի՞նչ հարկ կայ հրատարակութիւն ,  
քանի որ Ճշմարտութիւնը ինքնին ե-  
րեւան ելած է , գողը , 15 օրեայ քըն-  
ութենէն զինի , բռնուած է և այն  
մարդիկը , որոնք կը ջանային վանքի ա-  
նունը արատաւորել , ինքնին ամօթա-  
հար եղած են : Ո՞իթէ անդէպ չէ յաղ-  
թանակելէն զինի՝ խսպառ ոտնակոխ  
առնել պարտեալը : Այսպիսի պարա-  
գաներուն մէջ աւելի լսու է վեհանձ-  
նաբար ներելքան թէ հրատարակ հա-  
նել այն ճարտարահնար իրողութիւն-

ները , որով տքնեցան ոմանք վանքի ա-  
նունը բժաւորել և ինքնին խայտա-  
ռակ եղան : Ամեն բանին ժամկայ և  
ժամանակէ . քանի որ պարտելոց կող-  
մէն հրատարակական ընդդիմաբա-  
նութիւն չերեւիր , լռելն աւելի վա-  
յելուչ է :

Դամակոս . Առ Պ . Ա . Յ . և Պ . Խ .  
Գ . : Զեր զրկած Հայերէն և Արաբէ-  
րէն երկու ընդարձակ յօդուածները  
ընդունեցինք , յորոց առաջնը ձեր  
շարադրութիւնն է , իսկ երկրորդը աե-  
ղուց յունական Աղաբասիրաց Ընկերու-  
թան : Առաջնոյն մէջ երկու զբացուն  
հայ երիտասարդներ են , որ կը բողո-  
քեն յունական մոլեկրօնութեան գէմ  
իսկ երկրորդին մէջ յոյն ընկերութիւն  
մ' է , որ կը նկարագրէ տեղլոցն յու-  
նաց պատրիարքարանի զեղումները  
և նցն ընկերութեան գէմ յարուցած  
հալածանքները : Հայերէն յօդուածը ,  
թէ և գեղեցիկ , առ այժմ չենք ու զեր  
հրատարակել , ուստի և ձեր ներողա-  
մութիւնը կը խնդրեմք : Իսկ Արա-  
բէրէնը՝ որ խիստ աղջու է և հիմնա-  
ւոր , ամքողջապէս հրատարակել տա-  
րագէպ կը համարիմք , այլ միայն իւր  
պարունակութեան սպատմական խիստ  
համառօտ հայերէն թարգմանութիւն  
կը ներկայացնենք ընմերցողաց , որպէս  
զի իւրաքանչիւր ոք տեսնէ՝ թէ ի՞նչ-  
քան թշուառ է յունապի կղերը , որ  
իւր ծայրայեղ զեղումները անտե-  
սութեան տալով Աթինայի Վելեթիսո  
եպիսկոպոսի եկեղեցական պատմու-  
թիւնը Արաբերէն թարգմանութք կը  
հրատարակէ (որուն մէջ մոլեգին ա-  
տելութեամբ Հայոց դաւանութիւնը  
հայհցուած է , ) և իբրեւ դասական  
գիրք դպրոցական անմեղ մանկանց  
ձեռքը կուտայ , նոցա սիրտը և միտքը  
մանկական հասակէն ատելութեան և  
մոլեւանդութեան մէջ կը թելու և

վարժելու համար, Ահայոյն ընկերութեան յօդուածոյն պատմական հակիմք բավանդակութիւնը :

“Դամասկոսի մէջ մէկ քանի յոյն անձինք աղքատափրական ընկերութիւն մը կը հաստատեն այնպիսեաց օգնութեան համար, որը շատ գիշերներ հանդերձ ընտանեօք անօթի կ'անցընեն, գարբի հաց անգամ ձեռքերնին չանցնիր: Առաջին անգամ յունաց պատրիարքարանը հաճութիւն չի տար: Աերաֆիմ անուն (փոխանորդ) եպիսկոպոսն ալ արդիլել կ'աշխատի, բայց չի յաջողիր, այլ ինքն ալ հաճութիւն կուտայ: Ճամանակէ մը վերջը յետագայգործը կը պատահէ: 1864ին դամասկացի Նիկոլա Խալամ անունով էրիտասարդ մի Նիկոլա իւլյուստ անուն մէկուն աղջկան հետ կը պատկռի: Ոէկ տարի և ութ ամիս սիրով առանց խոռվութեան կենալէն եաքը, աղջիկը հօրը տունը կը փախչի, բաւլովթէ: “Ինքն, էրկանը հօրը հետ ՚ի միասին, չուզէր բնակիլ: Այս պատճառաւ էրիկը ուրիշ տուն կը փարձէ, բայց անօգուտ, վասն զի այն տեղէն ալ մէկ քանի անգամ ոչինչ պատճառներով կը փախչի և միշտ ետ կը դառնայ: Վերջապէս յիշեալ կինը, գիշեր մը, հօրը, մօրը և երկու քահանաներու հետ (որոց անուանքն են, տէր Խուհաննա—իւլիանի և տէր Եան Ապո—իւլիան) կերթայ Եան Շամիչ անուն 70 տարեկան մէկու մը հետ կը պատկռի, մինչդեռ յիշեալը Պօլիս օրինաւոր և հաւատարիմ կին մի ունի: Ճաղավուրդը, այս եղելութիւնը իմանալով, պատրիարքարան մարդ կը զրկէ այս գործին վրայօք տեղեկութիւն ստանալու և ինչ պատճառու ըլլալը իմանալու համար: Նորին Ամեն, Արքազնութիւնը հինգ օր միջոց կ'որոշէ պատախան տալու: Արոշալ

օրը կը հասնի, բայց ամենեւին պատասխան մը չելլար, ուստի ժողովուրդը խուռուն բազմութեամբ աղաղակիլ պատրիարքարան կը մտնէ, նոյն միջոցին կինը առնուած տղուն հայրը թուղթ մի կու տայ Պատրիարքին, ուրով այս գործին պատճառը և թէ որ օրէնքով եղած ըլլալը գրութեամբ իմանալ կ'ուզէր: (1870, օգոստ, 8:)

Նորին սրբազնութիւնը թուղթը կարդալով և ժողովրդեան խոռվութիւնը տեսնելով, կինը իր առջի մարդուն գարձնել կ'ուզէ, բայց տղուն հայրը այս խօսքը կըսէ: “Յթէ օրէնքը կը հրամայէ:” Այս ատեն Պատրիարքը այս գործին մեղքը ըլլալը կը խոստովանի և յիշեալ Աերաֆիմ եպիսկոպոսը իր փոխանորդութեան պաշտօնէն հանել, և քահանաները եկեղեցւոյ պաշտօնէն արդիլել և Եան Շամիչի, Նիկոլա Խալամին հարսանեաց բոլոր ծափքը վճարել տալ կը խոստանայ: Այսու ամենայնիւ խոստացածէն և ոչ մէկը կը կատարէ, ուստի ժողովուրդը կրկնն կը խռովի և Պատրիարքարան կը գիմէ: Ոինչդեռ հան նստած կը խօսհրդակցին, պատկողքահանաներէն մէկը մէջ տեղը կը կայնի և այսպէս կըսէ: “Յօ իմ յահացուոր և պատժոյ արժանի ըլլալը կը խոստովանիմ, ստեղծած պէտք է որնախի եպիսկոպոսը պատժուի, վասն զի այս պատկին համար 13 օսկի առնողը ինքնէ, տակէ ՚ի զատ պատկի թուղթի համար ալ ոսկի մը: Այս խօսքէն ժողովուրդը աւելի կը բարբարի և նայն եպիսկոպոսը իր պաշտօնէն հանել կը խնդրէ: Բայց իրենց ականջ գնող չըլլար: Վերջապէս մէկ քանի օրէնքեաց յիշեալը Պատրիարքը թուղթի մը վրայ, ըստ Յունաց թագաւորներուն կանանին և ըստ Յուլիան ոսկեբերանի 48րդ գլուխն իբր թէ այս գործին ան-

մեղըլլալը կը հաստատէ : Իսկ ժողօվուրդը այս փաստերով գոհ ըլլարի :— Պատրիարքարանը այս շափավ ըստ բաւականալով, հետեւեալ օրը (17 սեպ. 1870) չորս հոգի Տէրութեան կը զրկէ իբր մեծ յանցաւոր բանտ գընելու համար : Վրացնոցն յանց մնք կը դնէ, որ վերսիշեալ Ընկերութեան հաստատուելուն մեծ օգուտներ ըրած է և այս անկանոն սպակին մասին արդարութիւնը երեւան հանել ջանացած, զոր Պատրիարքարանը ծածկել կ'ուզէր : Երկրորդին յանցանք կը դնէ, որովհետեւ ամեն պարագայի մէջ արդարութիւնը պաշտպանած է : Երրորդին յանցանք կը դնէ, որ կը բռզօքէր Հուման ըսուած քաղաքի բնակիներէն ութասուն տարեկան և թոռներու տէր մէկուն դէմ, որ իր կնոջ ստակ տալով խաբած էր և եղայրութիւն հաստատած : Եւ յետոյ հարստութեամբ ուրիշ աղկան մը սիրոր շահելով գիւղի քահանայի մը միջոցաւ գաղտնի անոր հետ պսակուած էր : Քաղաքացիք աղջիկը կը խնդրէն : Պատրիարքարանը զայն Դամասկոս բերել կուտայ և մէկու մը քով կը պահէ, բայց յետոյ իր թեւլադրութեամբ կը փախցնէ : Այս եղելութիւնը յայտնուած ժամանակ՝ քահանան և պատկուողը կը փախցնի, և երրորդ կարծեցեալ յանցաւորն էր որ միշտ կ'աշխատէր աղջիկն ետ դարձնել տալ, քանի որ ապօրինաւոր էր պսակը և քահանան անպատիմ ըստուլ բայց քահանային տուած ստակը յաղթեց : Պատրիարքարանն աղքաղաքացիներէն բաւական մեծ գումար մը կ'առնէ, բայց բան մ'ալ չկատարեր :— Չորրորդին յանցանքն այն էր, որ երեք տարի առաջ այլ և այլ պատճառներով իւր կինը կը թողու, որուն յիշեալ Աերաֆիմ եպիսկոպոսը

և առագ սարկաւագ մը բռնի արձական թուզի կուտան, և կինը ուրիշի մը հետ կը պատկեն 27 ոսկի առնելով : Յիշեալ անձը տեսնելով որ Պատրիարքարանը ամուսնական գործերով զրաղած է, աղերսագիր մը կը մատուցանէ իր դատը տեսնելու, և ասով բանտարկուելու կ'արժանանայ :

Միա այս է բանտարկելոց յանցանքը : Յիշեալ անձինքը միայն 24 ժամ բանտը կը մնան, և յետոյ Պատրիարքարանը հանել կու տայ ամենայն անպատութեամբ . և անարդանօք, լռուեցընելով արդարութեան և իրաւանց ձայնը :  
~~~~~

## ԽԸՄԸՆԸԿԵՐԸԿԱՐԵՔ

Պաղաքիս Աւատրիացւոց հիւպատոսարանի փոխ-հիւպատոս մէր հայազդի Անձ, Պատրիարք Յ. Առւրատեանըն Աթանալի երրորդ աստիճանի պատուանշանը ստացաւ Առուսիոյ Տէրութենէն, Խրիմի պատերազմին ժամանակ՝ տեղւոյս Որու հպատակները Աւատրիացւոց հիւպատոսարանի հովանաւորութեւ տակ խնամով պաշտպանելուն համար : Այս վարձատրութիւնը խիստ ուրախալի է ինչպէս մէզ, նոյն պէս և անշուշտ ամեն մէր աղքայնոց համար, որսնք ի մօտոյ կը ճանաչէն չայազդի Փոխ-հիւպատոսին աղնիւ հոգին և գովելի տաղանդն ու բնաւորութիւնը :

— Ամսոյն Յիմ Աստիճանաց ֆրանչիսկէան միաբանութիւնը կատարեց Աւատրիոյ կայսեր ծննդեան տարեդարձը : Նախ պատարագ մատուցին Ա. Յարութեանաձարին մէջ գտնուած լատինական